ՀՏԴ 930.26(479.25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գոհար Աբրահամյան
Արցախի Պետական Համալսարան
Արցախ

Անոտացիա

Մարդկության պատմության ողջ ընթացքում մարդիկ զանազան պատկերացումներ են ունեցել մահվան և հանդերձյալ աշխարհի մասին: Հանդերձյալ կյանքում մահացածի վերածնվելու, վերջինիս հաճոյանալու և նրա հոգու բարկությունից խուսափելու համար կատարվում էին թաղման տարբեր ծիսակարգեր:

Մահվան պատկերացումներով պայմնավորնած մարդիկ կարծում էին, որ հանգուցյալը շարունակելու է ապրել նաև հանդերձյալ կյանքում, այդ պատճառով էլ բրոնզեդարյան հանգույն դամբարաններին վերագրվել են՝ տան, տաճարի, քարանձավի, նավի, արգանդի և այլ նշանակություններ: Բրոնզեդարյան դամբարաններն իրենց էությամբ, կառուցվածքով և առանձնահատկություններով արդյունք էին տվյալ ժամանակաշրջանի ու տարածաշրջանի մարդկանց աշխարհայացքին ու պատկերացումներին: Բրոնզեդարյան դամբարանները ստորաբաժանվում են վաղ բրոնզեդարյան, միջին բրոնզեդարյան և ուշ բրոնզեդարյան դամբարանների: Քանի որ տվյալ ժամանակաշրջանին վերաբերող գրավոր աղբյուրները համարյա բացակայում են, հետևաբար բրոնզեդարյան դամբարանների ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունեն մարդկանց կենցաղի, ապրելակերպի, հավատալիքների, աշխարհայացքի և սոցիալական շերտավորման ուսումնասիրության տեսակետից:

Բանալի բառեր՝ *թաղման ծես, բրոնզե դար, դիաթաղում, դիամասնատում, գլխի թաղում, վերահուղարկավորում, դիակիզում, հուշադամբարանային թաղում, կարասային թաղում:*

«Բոլոր մարդիկ էլ այսպես, թե այնպես դատապարտված են մահվան: Հայտնի չէ միայն նրանց՝ գիլիոտինին մոտենալու պահը». Վիկտոր Հյուգոյի հեղինակած այս տողերից հստակ երևում է, որ մարդիկ արդեն համակերպվել են, որ այսպես թե այնպես մահն անխուսափելի է: Մինչդեռ նախկինում մարդիկ այնպես չէին մտածում և ամեն կերպ պայքարում էին մահվան դեմ: Նրանց համար կյանքը մի մոգական աշխարհ էր: Յուրաքանչյուր երևույթ, ինչպես նաև մահը, նրանք բացատրում էին գերբնական ուժերի ազդեցությամբ: Մահը նրանց պատկերացումներում հանդիսանում էր որպես պատիժ կատարված որևէ վատ արարքի համար: Եվ չկատարելով վատ արարքներ ու հաճոյանալով իրենց նախնիներին, մարդիկ կարծում էին. որ կարող են խուսափել մահվան աղետից: Բայց,

տարբեր ազգեր ինչ էլ մտածեին մահվան մասին, պարզ է մի բան՝ բոլոր ժողովուրդներն էլ ունեին իրենց համար հստակ պատկերացում, թե ինչ է սպասվում մահացածին այնկողմնային աշխարհում: Մեծամասամբ նրանք պատկերացնում էին հստակ վայր, որտեղ մահացածները շարունակում էին ապրել այնպես, ինչպես այս աշխարհում:

Տարբեր ժողովուրդներ ունեն իրարից շատ տարբերվող թաղման ծիսակատարություններ: Այդ ծիսակատարությունները կատարվում էին ջանասիրությամբ: Հանգուցյալի համար կատարվում էր զոհաբերություններ, աղոթքներ, նրա հետ դրվում բազմաթիվ առարկաներ, զենքեր: Սակայն դա կապված է ոչ այնքան հանգուցյալի հանդեպ հարգանքի, որքան նրանից վախենալու հանգուցյալի բարկությունից խուսափելու հանգամանքով[9;173]:

Որպեսզի հանգուցյալը այնկողմնային աշխարհից նորից չվերադառնա, մասնատում էին նրա մարմինը, գլուխը առանձնացնում, գանգի մեջ գամեր խփում, վերջույթները կապում և այլն: Այդպիսի սովորություններից որոշները պահպանվել և հասել են մինչև մեր ժամանակները (ծանր գերեզմանաքար դնելը, դագաղը գամերով ամրացնելը, տան շեմքին չկանգնելը)[8;26]:

Ենթադրվում է, որ Հայկական լեռնաշխարհում մարդիկ անդրշիրիմյան աշխարհի մասին որոշակի պատկերացումներ ունեին մոտ 90-70 հազար տարի առաջ[5;121]:
Առանձնացնում ենք թաղման հետևյալ եղանակները.

ա) **Դիաթաղում կամ դիադրում:** Ուշբրոնզեդարյան Հայաստանում հուղարկավորության ամենատարածված ձևը դիաթաղումն էր: Այս եղանակը կապված էր Արա աստվածության, մասին եղած պատկերացումներով: Դամբարանում հանգչող ննջեցյալը դիտվել է որպես հարություն առնող և ծլարձակող հատիկ: Մեռյալի մարմինը հողին պահ տալով՝ հուղարկավորողներն իրենց երևակայության մեջ նրան նմանեցնում էին Արային՝ ապահովելով ննջեցյալի վերածնունդը: Նրա կիրառությունը Հայկական լեռաշխարհի հյուսիս-արևելքում հավաստված է դեռևս նորքարեդարում և պղնձեքարեդարում: Դիաթաղումն երբեմն ուղեկցվում էր գանգից ստորին ծնոտի անջատումով: Ստորին ծնոտը հայտնաբերվել է գլխի ետևում, գագաթոսկրի մոտ (Արուճի-5, Էլարի-38 դամբարաններ), ոտքերի մոտ (Լճաշեն) կամ ընդհանրապես բացակայում է (Մաստարայի-6 դամբարան): Այդ սովորությունը Հայաստանում պահպանվել է մինչև հելլենական ժամանակաշրջանը[3; 139-140]:

բ) դիամասնատրում: Դիամասնատրմամբ կատարված թաղումները (Արթիկ, Ստեփանավան, Վերին Նավեր) իրենց քանակով զիջում են դիաթաղմամբ կատարված թաղումներին: Ընդ որում ոչ մի դամբարանում այդ եղանակը միակը չի եղել, այն միշտ համադրվել է թաղման մյուս ձևերի հետ: Դիամասնատրման եղանակի հիմքում կարող է ընկած լինել հնում տարածված այն պատկերացումները, որ տիեզերքն առաջացել է դիամասնատրմամբ զոհաբերված մարմնի մասերից, կամ էլ հանգուցյալի նկատմամբ վախի զգացումը: Դիամասնատրմամբ կատարված որոշ թաղումների ուղեկցող գույքը դամբարանում է դրվել նախապես կոտրված վիճակում: Դիամասնատրմամբ կատարված թաղումներում, օրինակ, գանգը և մարմնի մյուս մասերը անկանոն կիտված են լինում իրար վրա (Արթիկի-115 դամբարան), գլուխը գտնվում է դամբարանի կենտրոնում, իսկ մարմինը մի անկյունում (Արթիկի-88 դամբարան) կամ դրված է եղել ոտքի ոսկորների վրա: Դիամասնատրման եղանակը Հայաստանում կիրառվել է դեռևս մեզոլիթից սկսած:

գ) գլխի թաղում: Հին մարդկանց պատկերացումների համաձայն մարդու հոգին գտնվում է մարմնի տարբեր մասերում՝ սրտում, ուղեղում, արյան մեջ, շնչառությունում, շողքի մեջ և այլն: Բայց մեծամասամբ հոգու հիմնական հանգչելատեղը համարվում է ուղեղը: Դրա համար էլ գլուխը առանձնահատուկ նշանակություն ունի միստիկական պատկերացումներում[8; 29]: Գլուխը մարմնից անջատելով, դիակին տրվում էր «լուսնային կերպարանք»՝ հանգուցյալի վերածնունդին նպաստելու համար: Գլուխները թաղում էին նաև խմբերով և երբեմն գանգերին հագցրած էր դեմքի փափուկ հյուսվածքները վերարտադրող կավե դիմակներ, իսկ ակնախոռոչում դրված էր խեցիներ: Գանգերը թաղում էին նաև խեցանոթների մեջ դրված վիճակում[5; 123]: Արթիկի-230 դամբարանից հայտնաբերվել է տուֆ քարով շրջապատված գանգ: Գլխի թաղումը Հայկական լեռնաշխարհում կատարվում էր ուշ բրոնզի և վաղ երկաթի դարից սկսած:

դ) երկրորդվող դիաթաղում կամ վերահուղարկավորում: Այս եղանակի էությունը կայանում է թաղումը երկու եղանակով կատարելու մեջ: Նախ դիակը դրվում էր հատուկ վայրում, որտեղ այն փտում կամ հոշոտվում էր թռչունների և գազանների կողմից: Միայն այդ ժամանակ էր դին համարվում երանելի: Այսօր էլ մեր շատ գերեզմանոցների մոտակայքում կան հատուկ կառուցված պատվանդաններ, որոնց վրա դագաղը ցած դնելու արարողությունը կարող է թաղման վերահուղարկավորման եղանակի հեռավոր արձագանքը լինել: Այդ ամենից հետո միայն հյուսվածքներից ազատված ոսկորները հավաքվում և դամբարան էր իջեցվում երբեմն փայտե պատգարակներով: Այդպիսի թաղումներ են կատարվել Աշտարակի Խոջաբաղերի, Շիրակավանի, Քարաշամբի և այլ դամբարաններում:

ե) դիակիզում: Այդ եղանակով Հայաստանում հուղարկավորությունը կատարվել է հիմնականում ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանում: Հին պատկերացումներում կրակն իր մեջ վերածնող էություն էր ամփոփում և կոչված էր ապահովելու մարդու վերածնունդը: Հանգուցյալի մարմնի հետ երբեմն այրում էին նաև նրա արժեքավոր իրերն ու հագուստը: Հարազատներն ամեն կերպ ցույց էին տալիս, թե ինչպես են ողբում իրենց հանգուցյալի մահը, նրանցից ոմանք նույնիսկ պատրաստ էին նետվել կրակի մեջ, հատկապես կանայք, պոկում էին վարսերը, զարկում կրծքին, վնասում իրենց և այլն[9; 173]: Թաղման գույքի հիման վրա կարելի է եզրակացնել, որ այս եղանակով հուղարկավորվել են հիմնականում քրմական դասի ներկայացուցիչները: Հայաստանում դիակիզման եղանակը լայն տարածում չուներ:

զ) Հուշադամբարանային «թաղում»: Հուշադամբարանները յուրատեսակ զոհարաններ են, որոնք կառուցվել են թաղման ծեսի պահանջներից ելնելով: Այստեղ տեղադրվել են հանգուցյալի տոնական հանդերձանքը, անձնական իրերը և նախատեսված զոհաբերությունները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում բավականաչափ տարածված էր հուշադամբարանի (կենոտաֆ) կիրառությունը թաղման ծեսում: «Կենոտաֆ» հունարենից թարգմանությամբ նշանակում է դատարկ դամբարան: Այդ դամբարաններում հիմնականում զոհաբերված կենդանու գանգը բացակայում է, իսկ որտեղ հանգուցյալն է ամփոփված, կենդանու գանգը առկա է կմախքի հետ մեկտեղ: 60-ից ավել կենոտաֆներ է հայտնաբերվել Արթիկում, ինչպես նաև Քարաշամբում, Լճաշենում, Շիրակավանում և այլուր:

Մահվան պատկերացումներով պայմանավորված բրոնզեդարյան դամբարաններին վերագրվել են հետևյալ նշանակությունները.

- **Տուն.** գերեզմանը առաջադրում է տան գաղափարին, որն իր արտահայտությունն է գտել հայկական առածներում: Ենթադրվում է նաև, որ մինոսյան

թոլլոսները կառուցվել են բնակելի տան նմանությամբ: Հին մարդկանց պատկերացումներով նույնիսկ սովորական կացարանները համարվում էին աշխարհի կենտրոնում՝ տիեզերական լեռան գագաթին տեղադրված, որի միջոցով հաղորդակցվում էին երկնքի հետ[6; 187]:

- **Տաճար.** բազմաթիվ առասպելական ու հնագիտական տվյալներ վկայում են տաճար-դամբարան կապի մասին և ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է կառույցների աստիճանական զարգացումը՝ զոհասեղան բաց երկնքի տակ, ապա տաճար: Դրա արտահայտությունը կարելի է համարել հայերի մոտ հետագայում գերեզմանները քրիստոնեական տաճարների շուրջ կառուցելը և հենց եկեղեցու մեջ կատարվող թաղումներ: Հին դամբարանը ժամանակի ընթացքում կարող է վերածվել մատուռի:
- **Արգանդ.** մի շարք մշակույթներում գերեզմանը հավասարեցվում է արգանդին, քանի որ երկուսն էլ զուգորդվում են հողի՝ պտղաբերության աղբյուրի և մնացորդները կլանողի հետ: Հայերի մոտ թաղումը դիտվում է որպես «վերադարձ մայր երկրի արգանդ»: Հայկական լեռնաշխարհում բրոնզեդարյան թաղման կառույցներից գերեզման-արգանդ համադրությանը համապատասխանում են կատակոմբները:
- **Կղզի**. տեղադրվելով «կղզու» վրա, ինչպես և «ձվի մեջ»՝ հանգուցյալը հաղորդակից է դարձվում աշխարհի արարչագործությանը: Այնկողմային աշխարհը շատ մարդկանց պատկերացումներում հանդես է գալիս որպես մեռյալների կղզի: Դամբարանադաշտերին կղզու վրա տեղ հատկացնելու սովորությունը գոյություն ուներ միջին քարեդարից սկսած (մեզոլիթ)[2; 213-215]:
- **Նավ.** դամբարանը համդրվել է նաև նավի հետ: Դա բնորոշ է հիմնականում հնդեվրոպական ժաղովուրդներին: Մի շարք լեզուներում (nau-s) ստացել է նաև մահ, գերեզման նշանակությունը: Հայերի մոտ տապան բառը նույնպես գործածվում է գերեզման, մահ իմաստներով: Ըստ ավանդության այնկողմյան աշխարհը ջրով է անջատված ողջերի աշխարհից և այնտեղ կարելի է հասնել նավի միջոցով:
- **Քարանձավ.** քարանձավը կապվել է մայր հողի ընդերքը տանող մուտք-ելք գաղափարին: Քարանձավում կատարված թաղումը կապվում է բնական ճանապարհով մայր հողին վերադառնալու իմաստին[6; 188]:

Բրոնզեդարյան դամբարաններն իրենց էությամբ, կառուցվածքով և առանձնահատկություններով արդյունք էին տվյալ ժամանակաշրջանի ու տարածաշրջանի մարդկանց աշխարհայացքին ու պատկերացումներին: Բրոնզեդարյան դամբարանները ստորաբաժանվում են վաղ բրոնզեդարյան, միջին բրոնզեդարյան և ուշ բրոնզեդարյան դամբարանների:

Վաղ բրոնզեդարյան բնակավայրերի պեղումները ցույց են տվել, որ բնակավայրերում և կացարանների հատակի տակ թաղումները հազվադեպ են կատարվել և պայմանավորված էին ծեսերի հետ: Փոխարենը հայտնի են քարայրներում կատարված թաղումները (Կապանի շրջանի Տանձվեր գյուղի մոտակայքում), սակայն դրանք բնորոշ չեն որևէ հատուկ ժամանակաշրջանի:

Վաղ բրոնզի դարաշրջանում թաղումները կատարվել են հիմնականում բնակավայրերից դուրս՝ դրանց համար նախատեսված հատուկ վայրերում՝ դամբարանադաշտերում: Այդ դամբարանադաշտերում առկա են ինչպես հիմնահողային և կարասային, այնպես էլ քարարկղային ու դամբարանաբլրային թաղումներ, որոնք Հայկական լեռնաշխարհում հանդիպում են մ.թ.ա. 4-րդ հազարամյակից սկսած[4; 194]: Անխաթար պահպանված վայրերում այդ դամբարանները գետնի մակերեսին առանձնանում են մանր քարերի փռվածքով (Լճաշեն, Կարճաղբյուր, Ծաղկալանջ, Էլար և այլն): Հիմնահողային

դամբարաններն ավելի վաղ են առաջացել, քան քարարկղայինը, որոնք հատակագծում ունենում են տարբեր ձևեր՝ ուղղանկյուն, ձվաձիր, հազվադեպ հանդիպում են նաև պայտաձև հատակագիծ ունեցողներ:

Ամենատարածվածը ուղղանկյուն հատակագիծ ունեցող քարարկղային դամբարաններն են, որոնց պատերից մեկի վրա (հիմնականում հարավային) մուտք է բացված: Վերջինս արտաքին կողմից ծածկված է մեկ-երկու սալաքարով (Քերթ, Հառիճ, Կարճաղբյուր և այլն): Երբեմն դամբարանի մուտքի առջևում միջանցք է բացվել: Այդ դամբարաններում հաջորդաբար թաղվել են ընտանիքի անդամները: Նոր հանգուցյալի համար տեղ ազատելու նպատակով նախորդների ոսկորները հավաքվել և կուտակվել են հյուսիսային պատի տակ:

Այդպիսի դամբարանը իրենից ներկայացնում էր բաց համալիր, որը չպետք է շփոթել տիրոջն ուղեկցող սպանված ծառաների համաժամանակյա թաղումների հետ, որից հետո դամբարանը այլևս չի բացվել:

Նշված տեսակներից բացի վաղ բրոնզի դարաշրջանում հանդիպում են սալարկղեր, որոնց պատերը կազմված են հողի կտրվածքին հենած, կողք-կողքի դասավորված խոշոր սալերից. դրանց վրա սալաքարեր են դրվել: Դրանցում կատարվում էին ինչպես անհատական, այնպես էլ զույգային ու խմբակային թաղումներ: Դամբարանների ու հուշաձանների ուսումնասիրության հիման վրա հաստատվում է այն փաստը, որ վաղ բրոնզեդարյան մշակութը տարածված է եղել Հայկական լեռնաշխարհում՝ Վանից ու Մալաթիայից մինչև Կապուտան լիճ ու Արաքսի հովիտ[7; 31]:

Միջին բրոնզի դարաշրջանում դամբարանների առավել տարածված տեսակներից էր հիմնահողայինը (Արցախ, Սյունիք, Արարատյան դաշտ, Շիրակ): Առանձին շրջաններում (Լոռու բերդի դամբարանադաշտ) առկա են քար ու հողով լցված քարարկղեր, սալարկղեր և հազվադեպ դամբարանախցեր: Խոշոր դամբարանախցերը արևելյան կողմում մուտք ունեին: Այդ դամբարանների կավածեփ հատակներին պահպանվել են խսիրների դրոշմներ. առկա են հատակի մեջ փորված ձագարաձև խոռոչներ, որոնց մեջ ածխի կտորներ ու մոխիր է հայտնաբերվել:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հողի կտրվածքին հենած և դրանց վրա լայնակի դրված գերանների ծածկով դամբարանները: Պատերի գերանները ծածկող սև մակերեսով նյութի վրա (կաշի կամ գործվածք) դեղին, նարնջագույն և կանաչ գույներով նկարվել են ցուլեր, եղջերուներ, օձեր, ձկներ, թռչուններ և մարդիկ: Դամբարաններում հայտնաբերվել են նաև շագանակագույն բնափայտի կտորներ, որոնք ըստ երևույթին ենթարկվել են ուժեղ ճնշման: Կարմրաձառերը (գեղձի, կենի) ընկալվում էր որպես կենաց ծառ, այն տնկում էին նաև գերեզմանոցներում, որպես մահը հաղթահարելու խորհրդանիշ[4; 196]: Դամբարանը ծածկող լիցքից հայնաբերվում էին նաև զոհաբերված կենդանիների մնացորդներ:

Անցումային շրջանի ճոխ թաղումների հետքեր կան առաջնորդների դամբարաններում, որոնց պեղումներից գտնվել են հավանաբար երկանիվ դիակառքի թափքից պահպանված ու կարմիր, սև, սպիտակ գույնի մածուկներով ընդելուզված տախտակների դաջվածքներ: Դիակառքով կատարված հարուստ թաղումներ են Վանաձորի, Լոռի-Բերդի, Քարաշամբի դամբարաններում դիակիզմամբ կատարված թաղումները:

Քարաշամբի դամբարանախցից զուրկ դամբարանաթումբը ծածկել է անմիջապես գետնի մակերեսին դիակիզմամբ կատարված թաղումը, որը շրջափակվել է շրջանաձև

տեղադրված քարերով՝ կրոմլեխով: Պեղումների արդյունքները ցույց են տվել, որ հարուստ թաղումները միշտ չէ, որ մեծ խցերում են կատարվել: Դամբարաններում կմախքը և ուղեկցող գույքը ծածկվել են կավացեխով: Դամբարանները լցվել են քար ու հողով, ապա ծածկվել խոշոր սալերով, դրանց վրա քարազրահ է բարձրացվել ու շրջափակվել կրոմլեխով:

Միջին բրոնզեդարյան դամբարանները հատակագծում հիմնականում ուղղանկյուն կամ ձվածիր տեսք ունեին: Հանդիպում են նաև պատերի մեջ խորշեր փորված դամբարանախցեր, իսկ առանձին դեպքերում պատին կպած նստարանի ձևով հողաշերտ է թողնված (Վերին Նավեր): Գտնվել է նաև երկու դամբարանախուց ծածկող դամբարանաթմբեր[6; 104]:

Միջին բրոնզեդարյան դամբարանաբլուրները գագաթներին սովորաբար ունեին ձևով և բարձրությամբ տարբեր բազալտե քարեր և կարող էին չունենալ կրոմլեխ[4; 187]: Հենց այդ ժամանակից սկսել են դամբարանների վրա կանգնեցնել նաև քարե կոթողներ: Ժամանակի պատկերացումներում այն համեմատվում էր կենաց ծառի հետ: Ժայռաբեկորը, մենհիրը, սյունը, ինչպես նաև կենաց ծառը կարող էին նպաստել ննջեցյալների վերածննդին և համարվում էին երկինք տանող ճանապարհ[2, 223]: Մահարձանների մոտ կատարվել են զոհաբերման արարողություններ՝ ձոնված հանգուցյալի հիշատակին, իսկ մարդակերպ կառքերի վրա արված կեռախաչերը հիմք են տալիս ենթադրելու, որ մահարձանները ձոնվել են արևին և պտղաբերությանը, ինչպես նաև մեռնող ու հարություն առնող աստվածությանը[1; 46]:

Ուշ բրոնզեդարյան դամբարաններն աչքի են ընկնում իրենց զբաղեցրած տարածքի մեծությամբ, առատ ու շքեղ հնագիտական նյութերով՝ համեմատած նախորդ դարաշրջանների հետ[7; 34]: Դրանք հիմնականում կրոմլեխներով շրջապատված՝ հող ու քարից կամ միայն քարից պատրաստված դամբարանաթմբերում: Դրանք ծածկում են հիմնականում քարարկղային կամ սալարկղային՝ սալաքարերով ծածկված դամբարանախցերը: Սակայն հանդիպում են նաև յուրատեսակ դամբարանախցեր, ինչպիսին են օրինակ Արթիկի դամբարանադաշտում տուֆի շերտի մեջ փորված բարձրաճիտ կոշիկի տեսք ունեցող դամբարանախուցը: Երբեմն դամբարանախցերին կից փորվել են թաքստոցներ: Հանդիպում են նաև վերգետնյա դամբարանախցեր, որոնք ծածկված էին հող ու քարից, կամ տարբեր տեսակի քարերից կազմված դամբարաններից: Ուշ բրոնզեդարում նկատվում է միջին բրոնզե դարին բնորշ հիմնահողային դամբարանների թվի կտրուկ նվազում (Շիրակավան): Փոխարենը մեծանում է հուշադամբարանների թիվը, որոնց մեջ բացակայում են կմախքները:

Կարասային թաղումները թաղման տարածված ձև էին Հայկական լեռնաշխարհում և պահպանվել են ընդհուպ մինչև քրիստոնեության ընդունումը: Կարաս-դագաղները բավականին խոշոր չափեր ունեին, որոնց մեջ հանգուցյալի հետ միասին դրվում էին նրա անձնական իրերը, զենքերը, զարդարանքները (Արցախի դամբարաններ): Կարասային թաղումները լինում են խմբակային և անհատական, որն ավելի հաճախ է հանդիպում: Հանգուցյալը կարասում տեղադրված է լինում էմբրիոնի՝ սաղմի դիրքով, որով էլ վերջինս պետք է վերածնվեր հանդերձյալ աշխարհում:

Ուշ բրոնզեդարում ավելանում է խմբակային (տիրոջն ու ծառաներին կամ ստրուկներին և ընտանիքի անդամներ) թաղումների քանակը: Այդպիսի թաղումներում հատուկ երևում է խիստ շերտավորումը տիրոջ և ծառաների միջև, իսկ ընտանեկան

թաղումների ժամանակ առանձնանում է ընտանիքի նահապետի մնացորդները, որին ուղեկցում էր ավելի շատ ու ճոխ առարկաներ: Ակնհայտ է, որ բարձր խավի դամբարաններում կատարվում էին թագավորավայել թաղումներ և ցեղային ավագանուն պատկանող դամբարանները զբաղեցնում էին դամբարանադաշտի՝ շարքային համայնականների դամբարաններից առանձնացված հատվածներ[6; 120-121]: Դամբարանաբլրային մշակույթը հատուկ է Հայկական լեռնաշխարհին, որը համարվում է հնդեվրոպական նախահայրենիք[4; 198]: Դամբարանների պեղումների արդյունքները վկայում են, որ ուշ բրոնզե դարը հանդիսացել է տոհմատիրական կարգերի փլուզման, հայ էթնոսի ձևավորման, նահապետական մեծ ընտանիքների քայքայման, տնային ստրկության հանդես գալու ժամանակաշրջանը[7; 35]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եսայան Ս., Հայաստանի ուշբրոնզեդարյան քանդակագործությունը մ.թ.ա.14-10դդ.// ԼՀԳ 1975-12:
2. Թումանյան Գ., Բրոնզեդարյան դամբարանները մահվան պատկերացումներում և դրանց կառուցվածքի առանձնահատկությունները //ՊԲՀ 2011-2:
3. Թումանյան Գ., Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում //ՊԲՀ 2007-1:
4. Թումանյան Գ. Աշտարակի Խոջաբաղերի դամբարանաթումբը դամբարանաբլրային մշակույթի համատեքստում//ՊԲՀ 2008-1.
5. Թումանյան Գ., Ուշբրոնզեդարյան Հայաստանում թաղման ծիսակարգերի պայմանավորվածությունը մահվան պատկերացումներով//ՊԲՀ 2008-3:
6. Խնկիկյան Օ., Հայաստանի հնագիտություն, Երևան, 2009:
7. Մարտիրոսյան Հ., Հայաստանի հնագույն մշակույթի ուսումնասիրությունը և նրա զարգացման հեռանկարները// ԼՀԳ, 1994-1:
8. Липс Ю., Происхождение вещей, Москва, 1954.
9. Токарев С., Ранние формы религии, Москва, 1990.

РЕЗЮМЕ

Обряд погребения эпохи бронзового века на территории Армении и особенности построения склепов

Гоар Абрамян

Ключевые слова: Погребальный обряд, бронзовый век, ингумация, расчленение трупа, захоронение головы, перезахоронение, кремация, кенотаф, кувшинные захоронения.

В бронзовом веке на территории Армении проводились следующие погребальные обряды: ингумация, расчленение трупа, захоронение головы, перезахоронение, кремация, кенотаф. Раскопки в поселениях бронзового века показали, что захоронения редко делались в поселениях и жилищах, перемещая их на могильные поля. В основном были обнаружены подземные, курганные, кувшинные захоронения и захоронения в каменном ящике.

Поздний бронзовый век был периодом, в течение которого происходили распад кочевых племен, формирование армянской этнической принадлежности, разрушение крупных патриархальных семей и господство рабства. Это было ярко выражено в гробницах поздней бронзы.

SUMMARY

The Armenian Burial Ceremonies of the Bronze Age and the Constructional Peculiarities of Tombs

Gohar Abrahamyan

Keywords: burial ceremony, bronze age, interment, corpse partition, head interment, reburial, cremation, cenotaph, Jar burial.

During the bronze age in Armenia the following burial ceremonies were performed: interment, corpse partition, head interment, reburial, cremation, cenotaph and jar burial. The excavations in the bronze age settlements had shown, that the burials in settlements or under the shelters were rare, they were organized in special tomb fields. Most of all were performed underground, burials shell box, burials or burial mounts. The Late Bronze age was the period of the collapse of Tribal rules, the formation of Armenian Ethnos, the decay of the big patriarchal families and the period of home-slavery. These stratifications had been brightly noticed in the tomb fields of the Late Bronze age.